

ՆԿԱՐՉՈՒՀԻ ՄԱՅՏԱ ՄԸՆՏԻԿԵԱՆ

Միլանաբնակ նկարչուհի Օր. Մայտա Մընտիկեան, հայ ու մանաւանդ իտալական գեղարուեստի շրջանակներուն մէջ սկսած է յառուկ ուշադրութեան մը առարկայ դառնալ: Քանի մը անգամ յաջող ցուցահանդէսներ տուած է անցեալին՝ Միլանի մէջ, արժանանալով բարձրագոյն դնահատանքներու:

Վերջերս դարձեալ իր անունը լրագիրներու եւ գեղարուեստական հանդէսներու մէջ կրկնուեցան եւ ամէն անգամ ալ զովեաններու բաժինով մը: Թէեւ օտար երկրներէ մը տակ կը ստեղծագործէ, սակայն իր հոգին եւ իր սիրտը կապուած է ազգին, որուն մէջ տաղանդաւոր դաւան է ինքը, օտարներու առջեւ իր ցեղային յատկութիւնները յարգել տուող:

Ներկայ տարւոյս սկիզբն է որ նոր ցուցահանդէսով մը փառաւորուեցաւ Միլանի մէջ Օր. Մայտա Մընտիկեան: Փարիզի «Յառաջ» օրաթերթին մէջ ԲԺ. Արամայիս Սրապեան արտայայտուեցաւ իր մասին, տալով արձագանգ անոր ձեռք բերած յաջողութիւններուն:


«Բազմավէպ»ի մեր ընթերցողներուն համար մեծապէս հաճելի եւ հետաքրքրական է, տարակոյս չունինք, հայ արուեստագիտուհիին մասին Խմբագրութեանս հետեւեալ ամփոփումը:

Օր. Մայտա Մընտիկեան աշակերտած է անունի նկարիչ Քոլոմպոյի, որ նոր տպաւորապաշտ գպրոցին կը պատկանի, իրապաշտ հակումներով:

Այս ճշտումը հարկաւոր է, որպէսզի նկարչուհիին արուեստը ըլլայ հասկնալի եւ դնահատելի: Կը զատորոշուի նէ իսկոյն արդի նկարչական փորձեր տուող այն խմբակներէն, որոնք կը մշակեն տա-

կաւին անիմանալի, անթափանցելի արուեստ մը, ուր նոր ձկտումներ, բաւլիզմի, ապագայապաշտի եւ նոր-փիքասեան յղացումներու փառնուրդ մը կը ներկայացնեն, նկարչական այնպիսի եղանակով մը, որ տակաւին դտած է իր հունը, եւ որոնք կը թուին ըլլալ մեղանչումներ նուրբ ճաշակի:

Օր. Մայտայի նկարչութիւնը հիմնուած է իրականութեան վրայ, եւ արտայայտութեան մէջ զգալի հակումներ ցոյց կու տայ դէպի տպաւորապաշտ գպրոցը: Գիծը եւ գոյնը, երկու գաղափարներ նրկարչականին, խորհուրդներ չեն իրեն



Խափշիկի գլուխ - ՄԱՅՏԱ ՄԸՆՏԻԿԵԱՆ

համար: Նէ դտած է իր ճամբան եւ կը քալէ իր անձնական ուղիով, հետզհետէ կատարելագործելով ինքզինքը: Իր մէկ ծովանկարը, զոր տեսած եմ իր քով, իր քանի մը կենդանագիրները (որոնցմէ է խափշիկի մը գլուխը՝ զոր հոս կու տանք), իր բնանկարները, եւ մաքիւր-մորքերը, բան մը ունին՝ որ կը գրաւեն արդէն դիտողը:

Իր վերջին ցուցահանդէսին՝ իտալացի քննադատներէն մին այսպէս կ'արտայայտուէր. «Ունի նուրբ զգայնութիւն մը գոյնի, որուն վրայ արեւելեան խառնուածքի հետք մը կը նշմարուի: Շնորհքը, փափկութիւնը, կնոջական հոգիի մը թըրթուցումները կը զգացուին իր պատաստներուն վրայ»:

Ուրիշ քննադատ մը, Մարիոյ Փորթալուիի, կը գտնէ անոր մէջ «թարմութիւն վրձինի, սահունութիւն, թափանցկութիւն, մանաւանդ բնանկարներուն մէջ, եւ պարզութիւն ու յստակութիւն իր ընդհանուր արտայայտութեան մէջ: Մաթիսի ճաշակ մը կը բնորոշուի իր քով, մանաւանդ մաքիւր-մորքերու մէջ, բայց անձնական տուեալներ կու տան ցայտունութիւն իր նկարագրին»:

Ուրիշ մը, Տէ Միքէլի, կը շեշտէ անոր զգացումը, անկեղծութիւնը:

Խտտապահանջ միջավայրեր են, գեղարուեստի մարզին մէջ, իտալական կեդրոնները՝ Միլանի, Վենետիկի եւ Հռոմի: Արդ, եթէ Օր. Մայտա Մընտիկեան սկսած է արդէն յաղթել առաջին դժուարութիւններուն, եւ յաջողած է ուշադրութիւն

արթնցնել իր անձին եւ իր արուեստին շուրջ, ատիկա ապացոյց մըն է որ նէ պիտի ունենայ անդրադոյն յաջողութիւններ, որուն ի սրտէ փափաքող ենք:

Բոլոր քննադատները, որ խօսած են իր մասին, վեր կը հանեն իր հայկական ծագումը: Օր. Մայտա հպարտ է ատոր համար: Իր կատարած դերը, գեղարուեստի ասպարէզին վրայ, անուղղակի կերպով կը նպաստէ անտարակոյս իր հայ սեռակիցներուն փայլուն յաջողութիւններուն, բնածին յատկութիւններուն վերերեւումին: Իր այդ նախընտրած ճամբով նէ կը ծառայէ իր ազգին:

Այս տարի ամառուան ընթացքին միտք ունի Պոլսոյ մէջ եւս ցուցահանդէս մը տալու: Այդ այցելութիւնը պիտի ունենայ անուշտ իր օգտակարութիւնը եւ պիտի նպաստէ իր անունին շուրջ կազմուած համբաւը ապացուցանելու հայ միջավայրի մը մէջ, եւ փոխադարձաբար հարստանալու նորանոր ներշնչումներով:

Այս քանի մը տողերը մամուլին յանձնած ատեննիս, պարտք կը համարինք Ս. Ղազարու Թանգարանին վարչութեան կողմէ շնորհակալութիւն յայտնել Օրիորդ Մայտային, որ այնքան ազնուութեամբ հաճած է իր վերջին արտագրութիւններէն նկար մը եւս նուիրելու մեր Թանգարանին, ուր արդէն նախապէս ցուցադրած էինք իրմէ ուրիշ գործ մը:

Ս. Ղազարու այցելուները, հայ կամ օտար, առիթը կ'ունենան այսպէս, ծանօթանալու իր անձին եւ իր արուեստին գէթ քանի մը նմոյշներուն:

Խմբագրութիւն